ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

ԵՊՀ ՌԵԿՏՈՐ Հ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ _____

ԱՇԽԱՏԱԿԱՐԳ

«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԳԵՐԱԶԱՆՑՈՒԹՅԱՆ ՄՐՑԱՆԱԿ» ԱՄԵՆԱՄՅԱ ՄՐՑՈՒՅԹԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ

1. «Երևանի պետական համալսարանում դասավանդման գերազանցության մրցանակի» համակարգող հանձնաժողովն (այսուհետ՝ Հանձնաժողով) իր լիազորություններն իրականացնելիս գործում է Երևանի պետական համալսարանի ռեկտորի 10.02.2022թ. թիվ 27/83-Լ հրամանին և սույն աշխատակարգին համապատասխան:
2. Թեկնածուների առաջադրման, մրցանակակրի ընտրության և այլ կազմակերպական աշխատանքների կատարման նպատակով հանձնաժողովը հրավիրում է նիստեր: Հանձնաժողովի նիստն իրավազոր է, եթե դրան մասնակցում են անդամների ընդհանուր թվի առնվազն 2/3-ը: Հանձնաժողովի որոշումներն ընդունվում են նիստին ներկա անդամների ձայների պարզ մեծամասնությամբ:
3. Մրցույթի արդյունքներով հանձնաժողովը յուրաքանչյուր թեկնածուի համար կայացնում է հետևյալ որոշումներից մեկը՝
   ա) մրցանակակիր ճանաչելու և մրցանակը շնորհելու մասին,
   բ) մրցույթը չկայացած համարելու մասին,
   գ) մրցանակակիր չճանաչելու մասին:
4. Մրցանակակիրների վերաբերյալ հանձնաժողովի որոշումները մինչև մրցանակաբաշխության անցկացման օրը ենթակա չեն հրապարակման:
5. Հանձնաժողովի անդամները Հանձնաժողովի հերթական նիստի հրավիրման մասին տեղեկացվում են ոչ ուշ, քան երեք աշխատանքային օր առաջ, իսկ արտահերթ նիստի հրավիրման մասին՝ ոչ ուշ, քան մեկ ժամ առաջ: Հանձնաժողովի նիստերի հրավիրման մասին Հանձնաժողովի անդամները տեղեկացվում են հեռախոսով կամ էլեկտրոնային հաղորդագրությամբ: Հանձնաժողովի որոշմամբ կազմվում է տվյալ նիստի արձանագրությունը:
6. Հանձնաժողովը դասալսումներն իրականացնում է մրցույթին մասնակցող թեկնածուի համար չնախատեսված կերպով: Հանձնաժողովը կարող է որոշում

ընդունել տվյալ դասալսմանը փորձագետներ ներգրավելու մասին: Դասալսումները և դրանց վերլուծությունը տեղի են ունենում ըստ հավելված 1-ում ներկայացված դասի գնահատման հարցաթերթի և դասալսման արդյունքների:

7. Թեկնածուները գնահատվում են 100 միավորանոց համակարգով՝ ներկայացված չափանիշներին համապատասխան

Աղյուսակ 1.

Գնահատման չափանիշներ	*Միավոր*
Թեկնածուների ուսանողների գնահատականներ	20%
Ժամանակակից դասավանդման մեթոդների օգտագործում	30%
Դասալսումներ	30%
Ուսումնամեթոդական ձեռնարկներ	20%

Հավելված 1

ԴԱՍԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՐՑԱԹԵՐԹ

Դասախոս _____

Դասընթացի անվանումը _____

Ուս.տարի

_____

Դասալսող/-ներ/ _____ _____

Ուսանողների քանակ _____ Ամսաթիվ ___/___/_____

Գնահատման սանդղակ

4— իրականացվել է գերազանց

3— իրականացվել է լավ

2— իրականացվել է որոշակիորեն

1— իրականացվել է ոչ այդքան լավ

0— չի դիտվել/դժվար է գնահատել

	Դիտման ասպեկտները	Գնահատական				
	1. Նախաբան և կողմնորոշում					
1.	Բացատրում է նյութի նպատակն ու խնդիրները	4	3	2	1	0
2.	Ներկայացնում է նախորդ նյութի հետ կապը	4	3	2	1	0
3.	Բացատրում է առարկայի մեջ տվյալ նյութի տեղը	4	3	2	1	0
	2. *Ուսանողների ներգրավվածություն*					
4.	Հարց է տալիս և սպասում պատասխանի	4	3	2	1	0
5.	Համակարգում և ուղղորդում է քննարկումը	4	3	2	1	0
6.	Առաջարկում է ուսանողներին մասնակցել հարցի քննարկմանը	4	3	2	1	0

	3. Վերաբերմունք					
7.	Ոգևորված է առարկայով	4	3	2	1	0
8.	Ուսանողների մոտ հետաքրքրություն է առաջացնում առարկայի հանդեպ	4	3	2	1	0
9.	Ուսանողների հետ կապն անմիջական է և հարգալից	4	3	2	1	0
	4. Դասավանդման մեթոդ					
10.	Օգտագործում է տեսա-ձայնագրված նյութ (օր.՝ Power Point), ուսումնաօժանդակ նյութեր, սարքեր	4	3	2	1	0
11.	Կիրառում է դասավանդման տարբեր մեթոդներ, որոնց շնորհիվ հասնում է իր նպատակին	4	3	2	1	0
12.	Շեշտադրում է նյութի հատվածների միջև անցումները	4	3	2	1	0
13.	Շեշտադրում է գլխավորը, հիմնարարը	4	3	2	1	0
14.	Բացատրում է հստակ և համոզիչ	4	3	2	1	0
15.	Կիրառում է կոնկրետ և պրակտիկ օրինակներ	4	3	2	1	0
16.	Կիրառված դասավանդման մեթոդները թույլ են տալիս հասնել դասի նպատակներին	4	3	2	1	0
17.	Ունի ձևավորված խոսքի մշակույթ	4	3	2	1	0
	5. Ամփոփում					
18.	Դասն ամփոփում է և անում եզրահանգումներ	4	3	2	1	0
19.	Պատասխանում է հարցերին	4	3	2	1	0
20.	Լսարան է մտնում և դասն ավարտում է ժամանակին	4	3	2	1	0

Լրացուցիչ մեկնաբանություններ

_____

_____

_____

_____